

2008
3-4

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Գլխավոր խմբագիր՝ Բ.Գ.Թ. Ելենա Երջնայան
Պատասխանատու քարտուղար՝ Կարինե Պողոսյան

Խմբագրության նորհուրդ՝

- Բարլեճիճյան Արամ - Բ.Գ.Թ.*
- Գասպարյան Սեդա - Բ.Գ.Թ.*
- Գաբրիելյան Յուրի - Բ.Գ.Թ.*
- Հոսկունյան Աննա - Բ.Գ.Թ.*
- Գասպարյան Գայանե - Բ.Գ.Թ.*
- Չալոբյան Սոփյաննա - Բ.Գ.Թ.*
- Սիմոնյան Արմինե - Բ.Գ.Թ.*
- Խաչիկյան Անուշ - ԿԱԻ*

Բ ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Մ

Կ ր թ ա Կ Ա Ն Բ Ա Ր Ե Փ Ո Ւ Ւ Ւ Ն Ե Ր

Ելենա Երզնկյան *Փառասման դերը ուսուցման և ուսմանը մոտենալիս* 3

Լ Ե Ր Վ Ա Ր Ա Ն Ի Տ Ի Յ ՈՒ Մ Ե Վ Ո Ա Ս Ա Կ Ա Ն Դ ՈՒ Մ

ГАЯНҲҮ ГАСПАРЯҲ *В. ՆԱԺԻՅԱԻ: ԱԺԻՅԱԻՆԵԱՅ ՆՕԱՆՕԱԻՕԵՅ ԷԱԷ ԷԼՂԻԵՕԷԱԼՂԱ
ԱՂՇԱ ՆԱՅՇԻՆՈՔ ԾԱԷՆՈՂԱ* 11

Նանիա Շափիյան *Ընդհանուր և յատկապես ժեստային և անհատականությունները ժամանակակից գերմաներենի և շվեդերենի ...* 25

Սարինե Մելիքյան *Werden+անորոշ դերբայի բերականացումը*
գերմաներենի 40

Գուշուր Հոսսեֆյան *Առկալիկ անկայանքային ուղիները* 53

SVETLANA MARGARYAN *PRODUCTIVE WAYS OF WORD FORMATION IN
NON-STANDARD ENGLISH* 63

Դ Ա Ս Ա Կ Ա Ն Դ ՈՒ Մ Ա Մ Ե Ր ՈՒ Կ Ա Ս

GAYANE HOVHANNISYAN *THE UNSPOKEN ASPECTS OF FOREIGN LANGUAGE
MASTERY: CULTURE AND NONVERBAL BEHAVIOUR* 68

Հ Ր Ա Կ Ի Ր ՈՒ Մ Ե Վ Ը Ն Ա Ն Դ Կ Ա Ս

Սեդա Գասարյան
Լուիզա Գասարյան *Թարգմանական «բռն»։ Անփոփոխություն, թե՞ յիշողություն* 76

Դ Ա Ս Ա Կ Ա Ն Դ ՈՒ Մ Փ Ո Ր Ք Ի Ց

ANNA STEPANYAN *DIMENSION INTERCULTURELLE EN PHONÉTIQUE
PRATIQUE* 93

Օ Պ Ե Ր Ի Տ Ի Յ ՈՒ Մ ՈՒ Ս ՈՒ Թ Յ ՈՒ Մ

GAYANE ELARYAN *THROUGH POETRY PACKET* 100

A HOLIDAY COLLECTION OF SONGS AND POEMS..... 111

KARINE POGHOSYAN *HOW TO CREATE A GOOD LEARNING ATMOSPHERE* 121

Տ Ե Ր Ե Կ Ա Ց Ա Ն ՈՒ Մ Ե Վ

YELENA YERZNKYAN *ESSE-9 INTERNATIONAL CONFERENCE* 125

3-4-2008

ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՏՈՒՄՆԵՐ

ԵԼԵՆԱ ԵՐԶՆԿՅԱՆ

Երևանի պետական համալսարան

ՓՆԱՀԱՏՄԱՆ ԴԵՐԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ և ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Օտար լեզուների և մասնավորապես անգլերենի ուսուցումը հանրակրթության անհրաժեշտ բաղադրիչներից մեկն է: Դժվար է գերազնահատել օտար լեզուների ուսումնասիրության անհրաժեշտությունը և դրանց կիրառական նշանակությունը՝ որպես հաղորդակցման, ճանաչման, ինքնադրսևորման միջոց: Օտար լեզուների իմացությունը կարևոր է նաև առօրյա կյանքում, միջանձնային և միջնշակութային շփումների ընթացքում: Այս առումով առաջնային պայման է պատշաճ մակարդակով օտար լեզուների՝ հատկապես որպես միջազգայնորեն հաստատված լեզուների տիրապետումը: Տրամաբանական է, որ ներկայումս, աշխարհի քաղաքակիրթ երկրներում օտար լեզվի դասավանդումը դրված է շատ լուրջ հիմքերի վրա, և այժմ նույնիսկ

ոչ թե երկլեզվությունը, այլ բազմալեզվությունն է կրթության համակարգում շրջանառվող առանցքային հասկացությունը: Եվ որպեսզի հնարավոր լինի հասնել իրական արդյունքների, այսինքն սովորողը ձեռք բերի կայուն գիտելիքներ, զարգացնի կարողություններն ու հմտությունները և կարողանա դրանք իրական կյանքում կիրառել պետք է հաշվի առնել տարբեր գործոններ, այդ թվում նաև գնահատման գործոնը, որը խթանող դեր է կատարում ուսուցման և ուսումնառության գործընթացում:

Ինչպես հայտնի է դասավանդումն ու գնահատումը սերտորեն կապված են: Ըստ «Հանրակրթության պետական կրթակարգի»՝ գնահատումն ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման մի-

ջոց է: Այն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, ինչպես նաև ստանալ դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը:

Գնահատման համակարգը կոչված է ապահովելու միջազգայնորեն ընդունված գնահատման չափանիշների հետ համադրելիությունը և հիմնվում է հետևյալ հիմնական սկզբունքների վրա. օբյեկտիվություն, արդարություն, հուսալիություն, անկողմնակալություն, հավաստիություն, հիմնավորվածություն, մատչելիություն, թափանցիկություն (Հանրակրթության պետական կրթակարգ, էջ 14-15):

Հայտնի է, որ գոյություն ունեն գնահատման տարբեր ձևեր ու տեսակներ: Գնահատման տեսակներից են հայտորոշիչ (diagnostic) գնահատումը, ընթացիկ/ձևավորող (formative) գնահատումը և ամփոփիչ (summative) գնահատումը: Հայտորոշիչ գնահատումը կիրառվում է ուսումնական գործընթացի կամ որևէ փուլի սկզբում: Նպատակը խմբի գիտելիքների, հմտությունների և արժեքների մակարդակի որոշումն է՝ հետագա ուսուցումն արդյունա-

վետ կազմակերպելու համար: Ամփոփիչ գնահատումը իրականացնում է սովորողի առաջադիմության վավերացում, վկայագրում և արդյունքների համեմատական հրապարակում: Այս բաժանումը հիմնականում պայմանական է: Ամփոփիչ գնահատումը ստուգում է ամբողջական դասընթացի, առարկայի յուրացման աստիճանը: Պարտադիր ամփոփիչ գնահատումների միջոցով ստուգվում են նաև հանրակրթական դպրոցի շրջանավարտի ուսումնական գործունեության արդյունքները:

Ընթացիկ գնահատման նպատակն է ուսումնական գործընթացի բարելավումը, այն հիմնված է հետադարձ կապի վրա և նպաստում է բոլոր սովորողներին ուսման ընթացքի մեջ ներգրավվելուն: Այն անցկացվում է դասընթացի ընթացքում: Ընթացիկ գնահատումով ստուգվում է ուսումնական նյութի առանձին միավորի կամ դրա մի մասի յուրացման աստիճանը:

Ընթացիկ գնահատումը հրճարավորություն է տալիս *աշակերտին* հասկանալու, թե իր ուսումնական աշխատանքներում ինչ նվաճումների է հասել, ինչ բացթողումներ է ունեցել: Գնահատման այս միջոցով ապահովվելով սովորողներին հե-

տադարձ կապը՝ մենք ստեղծում ենք սովորելու նոր խթաններ:

Ընթացիկ գնահատումը համարակրթության գնահատման համակարգի անբաժանելի և կարևոր մասն է: Ներկայումս մեր դպրոցներում ներդրվում է ընթացիկ գնահատման նոր համակարգ, ինչը պայմանավորված է կրթության որակի բարելավման, ինչպես նաև յուրաքանչյուր սովորողի ուսումը խթանելու անհրաժեշտությամբ: Այդ համակարգը կոչված է ապահովելու շարունակական տեղեկատվություն ուսուցման ընթացքի մասին, ինչպես նաև բացահայտելու սովորողի ուսումնառության իրական ընթացքը և ապահովելու նրանց ուսումնական գործունեության առաջընթացը:

Ընթացիկ գնահատման նրպատակը յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեությունն ակտիվացնելն է և նրան տալ որ գարգացմանը նպաստելն է: Ընթացիկ գնահատման խնդիրը ոչ միայն սովորողների առաջադիմության գնահատումն է, այլ նաև ուսուցանումն է ու սովորողների ինացական գործունեության կազմակերպման բարելավումն է:

Վերջերս լույս է տեսել անգլերենի սովորողների ընթացիկ գնահատման համար երաշ-

խավորվող հայտորոշիչ թեստերի, ինչպես նաև թեմատիկ գրավոր աշխատանքների նմուշներ /4/, որոնք համապատասխանեցված են կրթության բովանդակության ու գործունեության համար սահմանված չափորոշիչներին և դպրոցում անգլերենի դասավանդման ծրագրային պահանջներին /3/: Սույն ձեռնարկի նպատակն է օգնել անգլերենի ուսուցիչներին ուսումնառությունը ճիշտ կազմակերպելու, այն խթանելու և սովորողների գիտելիքները և կարողությունները արդյունավետ գնահատելու գործում:

Գիտելիքների ուսուցանող գնահատումը բարձրացնում է ուսման արդյունավետությունը և որակը: Այն ուսուցչին հնարավորություն է տալիս պարզել յուրաքանչյուր սովորողի ձեռքբերումները, ինչպես նաև՝ բացահայտել բացթողումները: Գնահատման այս ձևը նպատակ է հետապնդում դասավանդման ընթացքում հայտորոշել առաջացած դժվարությունները, շրտկել թերությունները, ինչպես նաև բացահայտել այն կարիքները, որոնք պետք է հաշվի առնվեն հետագա քայլերը ձեռնարկելիս հաջորդ թեմաների ուսուցման ժամանակ: Ընթացիկ թեստի միջոցով գիտելիքների ստուգումն

ուղղված է *աշակերտներին* տեղեկություն տալու նրանց ուսումնական առաջընթացի, իսկ *ուսուցչին* աշակերտի կողմից նյութի յուրացման աստիճանի մասին:

Այսպիսով, գիտելիքների ընթացիկ գնահատումը ուսուցման արդյունքների ի հայտ բերման և վերահսկման միջոց է և նպատակաուղղված է սովորողների փաստացի գիտելիքների և դրանց կիրառելու, վերլուծելու և արժևորելու կարողությունների բացահայտմանը: Գիտելիքների ընթացիկ ստուգումը սովորողների մեջ ձևավորում է իրենց նկատմամբ պատասխանատու վերաբերմունք, թույլ է տալիս բացահայտել նրանց անհատական առանձնահատկությունները և տարբերակված մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ:

Ուսուցանող ստուգումը կարող է իրականացվել բանավոր կամ գրավոր:
 Գրավոր ստուգումը նպատակահարմար է համարվում իրականացնել կարճատև ընթացիկ թեստավորման միջոցով:
 Թեստը, ինչպես հայտնի է, մի շարք առաջադրանքներից կազմված համակարգ է, որի

արդյունքները կարող են ծառայել մեկ կամ բազմաթիվ հատուկ նպատակների /5/: Թեստը պետք է ստեղծված լինի առարկայի չափորոշիչների, բովանդակային միջուկի և պահանջվող կարողությունների և հմտությունների հիման վրա, այն պետք է բխի ուսումնական ծրագրից և դասավանդումից:

Սովորողների գիտելիքների ստուգումը ընթացիկ թեստերի միջոցով ցանկալի է իրականացնել յուրաքանչյուր դասից հետո: Այդ ժամանակ ստուգվում են անցած դասի ժամանակ ստացված գիտելիքների մտապահումը և ըմբռնումը, դրանք գործնականում կիրառելու հմտությունը: Ընդ որում, աշակերտների մեծամասնության համար այս թեստը պետք է լինի հեշտ ու մատչելի:

Ընթացիկ ստուգումը կարող է իրականացվել նաև թեմատիկ գրավոր աշխատանքների/թեստերի (end-of-topic tests) միջոցով, որոնք ստուգում են մի ամբողջ թեմայի վերաբերյալ աշակերտի փաստացի գիտելիքները, դրա ըմբռնման խորությունը: Թեմատիկ գրավոր աշխատանքը/թեստը չի կարող ընդգրկել տվյալ թեմայի բոլոր հարցերին վերաբերող առա-

3-4. 2008

ջադրանքներ: Միևնույն ժամանակ պետք է ձգտել դրանում ընդգրկել այնպիսի առաջադրանքներ, որոնց տրված պատասխանների ամբողջությունը պատկերացում տա տվյալ թեմայի կարևոր հիմնահարցերի վերաբերյալ սովորողների ստացած գիտելիքների խորության և ձեռք բերված հմտությունների մասին:

Այսօր հեռանկարային չի կարող լինել սոսկ օտար լեզվի դասավանդումը հորինված, սխեմատիկ բովանդակային նյութի հիման վրա: Ուսումնական նյութի արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է, որ ուսուցման բովանդակությունը համապատասխանի սովորողի հետաքրքրություններին, ընդլայնի դրանք, խթանի սովորելու ցանկությունը, հաճելի լինի և զարգացնի երևակայությունն ու ստեղծագործական գործունեությունը:

Լեզուն՝ լինելով հաղորդակցության միջոց անմիջականորեն կապված է հասարակության հետ և որպես հասարակական արդյունք պետք է օգտագործվի տարբեր հետաքրքրաշարժ և արդի հասարակական իրավիճակներում, լինի դա կենցաղային, թե մշակութային: Խոսքային նյութը և խոսքային հաղորդակցության

մոդելները պետք է հիմնվեն իրական կյանքից վերցված իրադարձությունների վրա՝ խրախուսելով հաղորդակցվելու ցանկությունը:

Այսպիսով, օտար լեզվի գործնական նպատակը ծրագրի սահմաններում հաղորդակցական հիմք ստեղծելն է, այսինքն՝ ըստ իրադրությունների կարողանալ օտար լեզվով արտահայտվել (թե՛ բանավոր և թե՛ գրավոր) նախատեսված թեմաների շուրջ և լեզվական նյութի սահմաններում հասկանալ ընթերցած կամ ունկնդրած տեքստերը:

Անգլերենի, ինչպես նաև մյուս օտար լեզուների դասավանդման գործընթացը հանրակրթական դպրոցում նպատակաուղղված է սովորողների մոտ հաղորդակցական կարողություններ զարգացնելուն *բոլոր բաղադրիչներով* լսել/ունկնդրել, խոսել, կարդալ/ընթերցել, գրել: Միայն լեզվական գործունեության այս չորս տեսակների համադրությունն է, որ հնարավորություն է տալիս ստեղծել բնական լեզվական միջավայրի մոդել և շփման համար անհրաժեշտ պայմաններ:

Անգլերենի ուսուցման ընթացքում սովորողների գիտելիքների և կարողությունների գնահատումն ունի իր յուրա-

հատկությունները: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել սովորողների վերը նշված հաղորդակցական կարողությունների ձևավորմանը և յուրացման տարբեր մակարդակների բացահայտմանը:

Խոսքային գործունեության յուրաքանչյուր ձևին պետք է համապատասխանեն յուրահատուկ առաջադրանքներ և վարժություններ: Բոլոր առաջադրանքների համար ընդհանուր է համարվում այն, որ դրանք պետք է հնարավորինս հաղորդակցական ուղղվածություն ունենան: Վերջինս ապահովելու համար ուսուցիչը պետք է հաղորդակցական խնդիրների լուծման համար բարենպաստ լեզվական միջավայր ստեղծի:

Վերը նշված ձեռնարկում ներկայացված մուլտի-օրինակներում հեղինակները նպատակ են դրել օգտագործել իրական կյանքից վերցրած (authentic) իրադրություններ, ինչը միաժամայն համապատասխանում է օտար լեզուների ուսուցման հաղորդակցական մոտեցմանը:

Հայտնի է, որ օտար լեզուների ուսուցման ժամանակ կիրառվող հաղորդակցական մոտեցումը (communicative approach) ներկայումս լայն տարածում ունի աշխարհում: Այն առաջացել է 1960-70-ական

թվականներին Մեծ Բրիտանիայում, երբ անգլերենն սկսեց տարածվել որպես միջազգային հաղորդակցման լեզու: Ակնհայտ դարձավ, որ այդ ժամանակ տարածված ավանդական մեթոդները չեն բավարարում անգլերենը որպես օտար լեզու սովորողների պահանջները, այն է՝ գործնականում հաղորդակցական նպատակների համար կիրառվող գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացմանը:

Այս նոր հաղորդակցական մոտեցումը չի կարելի անվանել ամբողջական համակարգված մեթոդիկա, ավելի շուտ այն մեթոդների միասնություն է, որի հիմնական նպատակն է սովորեցնել ուսանողներին ազատ հաղորդակցվել իրական հաղորդակցային իրավիճակներում: Սովորաբար զրուցակիցների միջև հաղորդակցությունը տեղի է ունենում կոնկրետ իրավիճակում, կոնկրետ պահանջները բավարարելու նպատակով: Հաղորդակցվելու համար խոսողը պետք է ներգրավվի լեզվի հաղորդակցական գործունեության մեջ և օգտվի հաղորդակցական ռազմավարություններից: Ռազմավարությունը հնարավորություն է տալիս ի մի բերել և հավասարակշռել խոսողի լեզվական պա-

շարները, անցում կատարել ուսումնական տեսքերից ու վարժություններից իրական հաղորդակցական իրավիճակների և ուսուցումը վերածել ստեղծագործ աշխատանքի:

Այս առումով ճիշտ կազմված թեստերը և դրանց համապատասխան գնահատումը օգնում են զարգացնելու սովորողների վերլուծական հակումները, ինացական/ճանաչողական բարձրակարգ մտածողությունը և նպաստում են գիտելիքների, կարողությունների և հրմտությունների կիրառմանը իրական կյանքի իրավիճակներում:

Հաղորդակցական իրավիճակներում կոնկրետ խնդիրներ լուծելու և խոսքային գործունեություն ծավալելու համար լեզու սովորողները հիմնվում են այն բազմաթիվ կարողությունների վրա, որոնք ձեռք են բերել ու զարգացրել իրենց կենսափորձի ընթացքում: Այստեղ հատկապես կարևորվում է միջմշակութային իրազեկությունը, որը օգնում է երկու լեզուները դիտարկել ավելի լայն համատեքստում: Հաղորդակցական նպատակներն իրականացնելու համար սովորողը պետք է կարողանա ընդհանուր կարողությունները համատեղել լեզվական-հաղորդակցական կարողությունների հետ, որոնք նե-

րառում են լեզվական-խոսքային կարողություններ, հանրամշակութային կարողություններ, գործաբանական կարողություններ, փոխհատուցման կարողություններ, ուսումնաճանաչողական կարողություններ:

Այսպիսով, հաղորդակցական մեթոդը՝ լինելով ներկայումս ամենատարածված մեթոդն աշխարհում հնարավոր է դարձնում ուսումնական գործընթացի բարելավումը՝ խրախուսելով սովորողներին լեզուն օգտագործել ոչ միայն ուսումնական գործընթացի ընթացքում, այլ նաև դրանից դուրս իրական հաղորդակցային իրավիճակներում:

Ձեռնարկում ներկայացվող թեստերը դրանով իսկ տարբերվում են սովորական հանձնարարություններից և վարժություններից: Հիմնված լինելով են հաղորդակցական մոտեցման վրա, այս թեստերը ստուգում են ոչ թե պարզ գիտելիքները, այլ ավելի շուտ կարողությունները (հմմ. knowledge-based tests և skill-based tests), քանի որ ի վերջո գիտելիքը միայն դառնալով կարողություն հնարավորություն է տալիս սովորողին ազատ հաղորդակցվել ոչ ստանդարտ (լսարանից

դուրս) իրավիճակներում: Սովորողների գիտելիքների ընթացիկ գնահատման նպատակով ըստուգումն իրագործվում է տարբեր բնույթի և տիպի առաջադրանքների միջոցով: Թեստերում հիմնականում օգտագործվում են բազմաբնույթ հարցեր՝ բազմակի ընտրություն (multiple choice), բացթողումների լրացում (gap-filling), համադրում/համակցում (matching), ճիշտ/սխալ (true/false), կարճ պատասխան (short answer questions), շարադրություն (essay):

Հուսով ենք, որ օգտվելով այս նմուշ-օրինակներից ուսուցիչները հնարավորություն կունենան ստեղծել սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման թեստեր անգլերենի դասընթացի տարբեր թեմաների վերաբերյալ և հաջողությամբ կիրառել դրանք:

Գրականություն

1. Հանրակրթության պետական կրթակարգ. Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Երևան, 2004:
2. Սովորողների գնահատման հայեցակարգ, ՀՀ ԿԳՆ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2005:
3. Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր. Անգլերեն, Երևան, Տիգրան Մեծ, 2006:
4. Երզնկյան Ե., Պողոսյան Կ., Առաքելյան Մ., Գրիգորյան Լ., Կարապետյան Մ. Անգլերեն ընթացիկ գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու, Երևան, Անտարես, 2008:
5. Alderson J., Clapham C., Wall D. Language Test Construction and Evaluation. Cambridge, Cambridge University Press, 1995.